

ԱՄԵՐԻԿԱՆ ԲԵՐՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

The Weekly AVEDAPER, American Bible House, Constantinople.

ՀԱՏՈՐ ԿԶ.

Կ. ՊՈԼԻՍ ՇՈԿՏԵՄԲԵՐ 25, 1913

ԹԻՒ 43

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԱՐԳՄԱՆԻՋՆԵՐ

ՎԵՐ. Ա. Պ. ՇՍԱՌՈՆԵԱՆ

Հեղիաստանէն Քալիֆօռնիա

Այսօր ամբողջ Հայութիւնը կը տօնէ Հայ դրոց գլխաւին և Հայ տպագրութեան կրկնակ Յորելեանը: Ն. Ս. Օծութիւն մամնայն Հայոց Հայրապետին նախադանութեամբ Էջմիածնայ մէջ և Օշականի մէջ Ս. Մեսրոպի գերեզմանին վերեւ դարաւոր եկեղեցւոյ մը սրտատուչ և վսեմ արարողութիւններովը կը կատարուի Ազգային մեծ տօնը: Եւ Էջմիածնէ դուրս դէպի Արեւելք և դէպի Արեւմուտք աշխարհի չորս կողմը տարածուած Հայութիւնը, հազարաւոր եկեղեցիներու մէջ և զանազան ձևերով և տարազներով, նոյն հանդէսը կը կատարէ և նոյն մեծ գրական և կրօնական գէպքին նշանակութիւնը և արժէքը չեղանկ կը ջանայ: Հայ կոչնակին ձայնը կ'սկսի թրթռալ այս առաւօտ Հնդկաստանի և Ասիոյ միջին անկիւններուն մէջ, կը հնչէ յաղթական Մասեաց Սարին ստորտը, կ'արձագանգէ մեղամաղձոտ Հայաստանի ձորերուն ստորտաէն և բլուրներուն կատարներէն, կը բարձրանայ Պոլսոյ խառնիճաղանձ ամբոխին ժխորէն վեր, կ'անցնի Հունգարիոյ դաշտերէն և Անգլիոյ բազմազաղ քաղաքներէն, կը մտնէ նոր աշխարհը և Քալիֆօռնիայի ծայրագոյն եզերքներուն վրայ կը թաղուի աղօթքի և փառաբանութեան մեղեգիներուն մէջ: Թող աշխարհ տեսնէ թէ հոս փոքրիկ ազգ մը կայ որ իր գրին և իր հաւատքին կառչած՝ կը մերժէ դասուիլ մեռած ազգերուն հետ:

Տիրայր Վրդի Մանգրէտը

Մեր ընթերցողները մեզի պիտի ներեն անշուշտ որ թարգմանչաց տօնին օրը համառօտակի ներկայացնել ջանանք երեք թարգմանութիւններ որ այս օրերս լոյս կը տեսնեն: Եւ նախ կ'ուզենք անվերապահ հիացումով խօսիլ Տիրայր վարդապետի խղճամիտ և գրեթէ կատարեալ գործին վրայ: Պայրընի «Մանգրէտ» քերթուածին թարգմանութիւնը կատարած է Անգլիերէն բնագրէն Տիրայր վարդապետ և հրատարակած Թիֆլիզի մէջ Կովկասի Հայոց Հրատարակչական ընկերութեան ձեռամբ կողիկ տպագրութեամբ: Կարելի չէր լաւագոյն ընտրութիւն մը ընել Պայրընի ինքնայատուկ ոճը և ոգին Հայ ազգին ճանօթացնելու համար: Տիրայր վարդապետի Հայերէնը սահուն, ջինջ և անուշ է, բոլորովին ազատ այն կարգ մը օտար, խորդ և անախորժ բառերէն և ոճերէն զորս սովոր ենք տեսնել յաճախ Արարատեան Հայերէնի մէջ: Թարգմանիչը այնքան խնամով ուսումնասիրած է բնագիրը և այնքան լաւ տիրացած է անոր որ ոչ մէկ աչքառու սխալ, ոչ մէկ ուշադրաւ թերութիւն սպրդած է ամբողջ գործին մէջ: Մեծ հաճոյքով կարդացինք գիրքը ծայրէ ի ծայր, և եթէ այս հաճոյքը քիչ մը խառնուեցաւ յուսախարութեամբ, այն ալ առաջին արարուածի առաջին տեսիլին վերջին երգին մէջ էր (երես 22-26): Այս երգին բնագիրը ոճի տեսակէտով զգլխիկ մեղեգի մըն է համակ, Թերեւս Տիրայր Վրդ. քսէ թէ այդ մեղեգին անթարգմանելի է, և թերեւս իրաւունք ալ ունի. մենք Հայերէնին մէջ այդ պակասը միայն կրցանք նշմարել: Ըսենք դարձեալ թէ ոչ մէկ քերթուած կրնար Մանգրէտի չափ յարմար ըլլալ մեծանուն Անգլիացիին բանաս-